ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԵՀԽ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԸ

Սույն թվականի փետրվարի 15-22–ը Ժնևում տեղի ունեցավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կենտրոնական Կոմիտեի նիստը, որը վերջինն էր մինչև ԵՀԽ 9-րդ Գլխավոր Ասամբլեան, որ տեղի է ունենալու 2006 թ., Բրազիլիայի Պորտո Ալեգրե քաղաքում:

Հայ Առաքելական Եկեղեցին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը նիստին մասնակցում էր հանձինս Գերաշնորհ Տ. Աղան արքեպս. Պալիոզյանի և օր. Սիլվա Ղազելյանի: Մեծի Տանն Կիլիկիո Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսն ապենապետում էր նիստը:

Ի շարս քննարկված հարցերի, Արամ Ա Կաթողիկոսի՝ Հայոց Մեծ եղեռնի 90-ամյակին նվիրված զեկույցից հետո, Ռուս Ուղղափառ Եկեղեցու Ավստրիայի եպիսկոպոս Իլարիոն Ալֆեևի առաջարկով, որոշվեց դիմել ԵՀԽ անդամ բոլոր Եկեղեցիներին՝ ապրիլի 24-ին աղոթքով հիշատակելու Հայոց Մեծ եղեռնը և հետագայում համապատասխան միջոցներ ձեռնարկելու: «Քրիստոնեական տեսանկյունից, դեպի արդարություն և հաշտություն տանող ճանապարհը, որպես անհրաժեշտ նախապայման, պահանջում է ընդունել կատարած հանցանքը՝ ապաքինելու հիշողությունները և ներման հնարավորություն ընձեռելու»,- ասվում է Կոմիտեի հայտարարության մեջ:

Նիստերի ընթացքում անդրադարձ եղավ վերջին յոթ տարիների ԵՀԽ գործունեությանը և մի շարք արդիական հարցերի թվում հիշվեց ցունամիի աղետը և Օվկիանիայի երկրների վիճակը, ԿԿ անդամներն իրենց աջակցությունն արտահայտեցին գաղթականների իրավունքների և Մեծ Բրիտանիայի կառավարության նախաձեռնության նկատմամբ՝ ամբողջովին ներելու Աֆրիկայի աղքատ երկրների պարտքերը:

Հատուկ ուշադրություն դարձվեց իրադրությանը Իրաքում: Այս հարցի մասին իր հայտարարության մեջ Կենտրոնական Կոմիտեն, մանրամասն նկարագրելով Իրաքի հարցի շուրջ ԵՀԽ դիրքորոշման պատմության զարգացումը, մերժեց այդ պետության դեմ պատերազմի արդարացումները: Ռազմական գործողություններն Իրաքում ևս մեկ անգամ ԵՀԽ-ի կողմից որակվեցին որպես անօրինական և՛ ՄԱԿ-ի Խարտիայի և՛ միջազգային իրավունքի այլ նորմերի տեսանկյունից դիտված:

Ի շարս այլ հարցերի, փաստաթղթում նշվում է, որ 200 մլրդ. դոլարը, որ ԱՄՆ ծախսել է այդ պատերազմի վրա, կբավարարեր մաքուր խմելու ջրով ապահովելու ամբողջ աշխարհի կարիքավոր երեխաներին 15 տարվա ընթացքում, որը կփրկեր 25 մլն. մարդկային կյանք: Հայտարարությունը «պատմության դատին» է հանձնում նրանց, ովքեր պատերազմ սկսե-

լու համար օգտագործել են կեղծ փաստեր՝ ահաբեկիչների հետ կապերի և մասսայական ոչնչացման զենքերի առկայության վերաբերյալ՝ միաժամանակ դատապարտելով խաղաղ բնակչության նկատմամբ բռնության գործադրումը, ի մասնավորի եկեղեցիների, մզկիթների և այլ շինությունների պայթեցումը, գերիներ վերցնելն ու նրանց սպանությունը, բանտարկյալներին նվաստացնելն ու տանջանքների ենթարկելը:

Աշխատանքի վերջին օրը Կենտրոնական Կոմիտեն հաստատեց փոփոխությունները ԵՀԽ սահմանադրության և կանոնների մեջ, որոնք ներմուծում են նոր մեխանիզմ որոշում կայացնելու գործընթացում: Այսուհետև որոշումները պետք է ընդունվեն ձայների մեծամասնությամբ, ինչպես դա տեղի էր ունենում նախկինում, սակայն կոնսենսուսի հիման վրա, որը ենթադրում է մասնակիցների կատարյալ համաձայնությունը: Ներմուծված փոփոխությունները պետք է ներկայացվեն ԵՀԽ 9-րդ համագումարի մասնակիցներին՝ վերջնական հաստատման համար:

Վերոնշյալ փոփոխությունները հնարավոր դարձան ԵՀԽ-ում Ուղղափառների մասնակցության կոմիտեի գործադիր մարմնի աշխատանքների շնորհիվ: Դրանք Ուղղափառ Եկեղեցիների ներկայացուցիչներին հնարավորություն են ընձեռում կանխել ձայների մեծամասնությամբ այնպիսի որոշումների ընդունումը, որոնք չեն համընկնում հարցի՝ Ուղղափառ ընկալման հետ: Նոր կանոնների գործադրումը ապահովելու համար Կենտրոնական Կոմիտեն հաստատեց մի մշտական հանձնախումբ, որ զբաղվելու է կոնսենսուսի և համագործակցության հարցերով և որում հավասարաչափ կներկայացվեն խորհրդի ուղղափառ և բողոքական ներկայացուցիչները:

Հիմնականում, բացառությամբ պաշտոնների համար ընտրության և ֆինանսական ու վարչական հարցերի լուծման դեպքերի, ԵՀԽ միջոցառումների ժամանակ որոշումները պետք է ընդունվեն մասնակիցների կատարյալ համաձայնությամբ: Եթե կան փոքրաթիվ մարդիկ, որոնք համաձայն չեն, նոր կանոնների համաձայն պետք է գործեն հետևյալ տարբերակները. որոշման ընդունումը հետաձգվում է, և ժամանակ է տրվում աղոթելու և լուռ խորհրդածության: Որոշումն ընդունվում է, փոքրամասնությունը արձանագրում է իր հատուկ տեսակետը, վերջնական փաստաթղթում արձանագրվում է տարբեր տեսակետների առկայության փաստը, փոքրամասնությունը հեռանում է որոշում կայացնելու գործընթացից, սակայն համաձայնվում է դրա իրականացման հետ: Որոշումը եթե չի ընդունվում, տեղի է ունենում քվեարկություն՝ պայմանով, որ որոշումը կընդունվի, եթե մասնակիցների 85%-ը տա իր համաձայնությունը: Քվեարկությունն ամեն դեպքում անհնար է ԵՀԽ անդամ եկեղեցիների եկեղեցաբանությանը վերաբերող հարցերում:

Ժողովը նաև հանգամանորեն քննարկեց 2006 թ. Բրազիլիայի Պորտո Ալեգրե քաղաքում տեղի ունենալիք ԵՀԽ 9-րդ համագումարի ծրագիրը, որին Մայր Աթոռ Ս. Էջմիածինը մասնակցելու է 14 ներկայացուցիչներով:

Հայ Եկեղեցու մասնակիցներն իրենց ակտիվ մասնակցությունը բերեցին նիստերի աշխատանքներին, իսկ բացման արարողությանը աղոթքով հանդես եկավ Տ. Աղան արքեպս. Պալիոզյանը:

ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Միջեկեղեցական հարաբերությունների բաժին